

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր  
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Քննարկի Միոգոյան*

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

### Արաբագիտություն

*Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ) .....10-21

*Մերի Չիլիսիյան*

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

*Հարություն Մաթևոսյան*

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

*Համիկ Երիցյան*

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

### Թյուրքագիտություն

*Վարուժան Գեղամյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

*Մարիամ Մելքոնյան*

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ..... 72-86

*Ռաֆիկ Խաչատրյան*

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ..... 87-98

*Գառնիկ Դավթյան*

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ..... 99-105

*Թամարա Աղանայան*

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐԶԻՎՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.)..... 106-117

**Իրանագիտություն**

*Լիանա Պետրոսյան*

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 118-123

*Անի Նահապետյան*

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ..... 124-140

*Նարե Գևորգյան*

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... 141-152

*Յասեր Քարամզադե Հաֆթխանի*

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ..... 153-160

## CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
-----------------------------------------------------	------

### Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
-------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
-----------------------------------------------------------------------------------------------------	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------

### Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---------------------------------------------------------------	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

### **Iranian Studies**

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE" .....	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

**ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ  
ՆԵՐՔԱԳԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԳԻՆԵՏԱԳԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

*Քանալի քառեր՝ Իրանի Իսլամական Հանրապետություն, Մահմուդ Ահմադինեժադ, թալիշներ, թալիշական նահանգ, Ալի Խամենեի, Գիլան նահանգ, Արդաբիլ նահանգ, Ֆուլան քաղաք*

2005 թ. Իրանում նախագահական ընտրություններում Մ. Ահմադինեժադի հաղթանակը ԻԻՀ ներքաղաքական կյանքում նոր ժամանակաշրջանի մեկնարկ հանդիսացավ: Նախագահական ընտրություններում համեմատաբար երիտասարդ և անփորձ նախագահի հայտնվելը ողջունվեց նաև էթնիկ խմբերի կողմից, որոնք իրենց սոցիալ-քաղաքական կյանքում առավել դրական փոփոխությունների ակնկալիքներ ունեին: Շատերի կարծիքով Մ. Ահմադինեժադը փոփոխությունների իրականացման լայն հնարավորություններ կունենար, քանի որ վայելում էր հոգևոր առաջնորդ Ա. Խամենեիի աջակցությունը:

Հենց այս շրջանում էլ երկրի թալիշ բնակչությունը ձեռնամուխ եղավ իր վաղեմի երազանքի, այն է՝ թալիշական նահանգի ստեղծման ծրագրի կյանքի կոչմանը: Հոդվածում կփորձենք ներկայացնել ծրագրի պատմական հենքը, դրա իրականացման հնարավորությունները, ծրագրի իրականացման թեր և դեմ կարծիքները, ինչպես նաև անկատար մնալու պատճառները:

Թալիշները հազարավոր տարիներ բնակվել են Կասպից ծովի հարավ-արևմուտքում, թալիշաբնակ տարածքները հնում կազմել են Մարաստանի և Ատրպատականի մի մասը: Արդեն 1747թ. թալիշները Սեյյեդ Աբբասի գլխավորությամբ ստեղծում են իրենց առաջին կիսաանկախ պետական միավորը՝ Թալիշական խանությունը<sup>2</sup>: Ուստի պատահական չէ, որ պատմական անցյալը հաշվի առնելով, հետագայում թալիշները հանդես են գալիս Իրանի տարածքում թալիշական նահանգի ստեղծման ծրագրով:

Այսօր թալիշները բնակվում են Իրանի հյուսիս-արևմտյան շրջաններում, մասնավորապես արևմուտքում գտնվող մերձկասպյան

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս, էլ. փոստ՝ lianapetrosyan@ysu.am

<sup>2</sup> Тальши, <https://www.kavkaz-uzel.eu/articles/151627/>, (16.12.2013)

Գիլան նահանգում (այսինքն Աստարա, Թալեշ, Մասալ, Ռեզվանշահր, Ֆումանսարա, Շաֆաթ քաղաքային կենտրոններում): Արդաբիլ նահանգում ևս մեծ քանակությամբ թալիշներ են բնակվում: Երկրի անվանումը որպես առանձին վարչական-քաղաքական շրջան՝ «Թալիշ» կամ «Վելայաթ-է Թալիշ» անվամբ հանդիում է Ռաշիդ ադ-Դին Ֆազուլլահի վկայություններում, որը վերաբերում է 13-րդ դարին<sup>3</sup>: Թալիշների մյուս հատվածը բնակվում է ներկայիս Ադրբեջանական Հանրապետությունում:

2005թ., երբ Իրանում հերթական նախագահական ընտրություններից հետո նախագահի պաշտոնը ստանձնեց Մ. Ահմադինեժադը, ով հանդես էր գալիս նախկին իշխանությունների սուր քննադատությամբ և ձգտում էր ամրապնդել մայրաքաղաքի և շրջանների միջև կապերը՝ երկրի բոլոր քաղաքացիների համար հավասար կենսապայմանների ապահովման ճանապարհով, Իրանում քննարկումներ սկսվեցին թալիշական նահանգի ստեղծման շուրջ: Ըստ այդմ, Թալիշ նահանգի ստեղծման համար նախատեսվում էր Ռեզվանշահր, Մասալ, Աստարայի շրջանները առանձնացնել Գիլանից, Անբարան, Բիլեսավար, Էմամ գետերով սահմանափակված տարածքը առանձնացնել Արդաբիլից և Աստարա կենտրոնով ձևավորել Թալիշ նահանգը<sup>4</sup>:

Որպես վերոնշյալի գործնական քայլ, թալիշական նահանգի ստեղծման հարցը խորհրդարանում բարձրացվել է Նասեր Աշուրիի կողմից, ով 2004-2008թթ. խորհրդարանում եղել է Ֆումանը ներկայացնող պատգամավորը: Ընդ որում պետք է նշել, որ 2004-2008թթ. Գիլանի պատգամավորները խորհրդարանում խմբակցություն ունեին, որը կոչվում էր «Գիլանի ներկայացուցիչների խումբ»՝ բաղկացած 13 անդամից: Ն. Աշուրիի առաջարկով նախատեսվում էր ստեղծել մի հանձնաժողով, որը պետք է մշակեր թալիշական նահանգի ստեղծման ծրագիրը՝ հաշվի առնելով տնտեսական, մշակութային, քաղաքական հնարավորությունները: Բացի այդ նախատեսվում էր, որ նահանգը պետք է բաղկացած լինի 49 քաղաքից և խորհրդարանում ունենա 13 պատգամավոր:

Այս ծրագիրը, ինչպես նաև նոր նահանգ ստեղծելու մյուս ծրագրերը ունեցել է բազմաթիվ կողմնակիցներ և հակառակորդներ:

<sup>3</sup> Маркарян С. М., Смбадян Р. С., Тальши в XIII-XIX вв., Введение в историю и культуру тальшского народа, под ред. Асатрян Г. С., Кавказский центр иранистики, Ереван, 2011, стр. 43

<sup>4</sup> Azmūdeh Š., Asiab šenāsīy-e ʿarh-e ostān-e Tāleš (Թալիշ նահանգի ստեղծման ծրագրի խնդիրները), Թալիշ ամսագիր, №23, 2005թ., էջ 12



Որպես այս նահանգի ստեղծման հակափաստարկ բերվում էր այն տեսակետը, թե նահանգի ստեղծումը կարող էր թալիշական ազգայնականության խթանման սկիզբ լինել, մատնանշելով այն հանգամանքը, որ թալիշների մի մասը սունի մուսուլման է, ինչը կարող էր նպաստել նաև սուննիական կրոնական գիտակցության զարգացմանը այս շրջանում<sup>5</sup>:

Սակայն սրան հակառակ պետք է փաստել, որ անջատողականության ի հայտ գալը քիչ հավանակն էր, քանի որ թալիշական նահանգի ստեղծման ջատագովները թալիշ բնակչության երիտասարդ և լուսավորչական թեն էին ներկայացնում, որոնք անջատողականության նկրտումներ չունեին, բացի այդ նահանգի թալիշները, թյուրքախոսները, գիլանցիները և այլ բնակչիներ միմյանց հետ համերաշխ էին: Հնարավոր է, որ նման մտավախություններ ունենային Գիլան և Արդաբիլ նահանգների ղեկավարները, որոնք թալիշական նահանգի ստեղծումից հետո կարող էին կորցնել տնտեսական, քաղաքական և հասարակական մեծ ռեսուրսներ:

Ծրագրի գաղափարակիցները նշում էին, որ նահանգի ստեղծման առաջնային անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ աչքի տակ ունենալով Ադրբեջանական Հանրապետությունում բնակվող թալիշների օրինակը, նրանք անհանգստացած էին իրանական մշակույթի մաս կազմող թալիշական ինքնագիտակցության վերացմամբ: Իրականությունն այն է, որ հատկապես Արդաբիլ նահանգից բնակչության խոշոր տեղաշարժերը թալիշաբնակ հատվածներ այսօր փոխել է այս տարծքների լեզվական քարտեզը՝ բանք դարձնելով մասամբ թյուրքախոս: Դա էր հիմնական պատճառը, որ որոշ գործիչներ թալիշերենի և թալիշների պահպանության միակ պայման էին համարում թալիշական նահանգի ստեղծումը:

Բացի այդ, ընդգրկված լինելով Գիլան նահանգի կազմում, թալիշները որոշակիորեն զրկված էին ինքնուրույն տնտեսական քաղաքականություն վարելու հնարավորությունից, իսկ նորաստեղծ թալիշական նահանգը կնպաստեր թալիշաբնական շրջանների առաջընթացին, նոր ենթակառուցվածքներին:

Թալիշական նահանգի ստեղծման ծրագիրը ուներ նաև հակառակորդների զգալի բանակ, ովքեր կարծում էին, որ Գիլան նահանգը ինքն աշխարհագրորեն փոքր է՝ մասամբ թալիշական

<sup>5</sup> Ā 'šūrī namāīande'-ye Fūman va Šaft, šak nakonīd! Tāleš ostān mī šavad (Փումանից և Շաֆթից ընտրված պատգամավոր Ամուրի՝ չկասկածեք, Թալիշը նահանգ է դառնալու:), Թալիշ ամսագիր, №22, 2005թ., էջ 20

նահանգի վերածվելու համար<sup>6</sup>: Սակայն դրան կարելի է հակադրել, քանի որ Գիլան նահանգը աշխարհագրորեն փոքր է՝ համեմատած Իրանի մյուս նահանգների հետ, միևնույն ժամանակ ունի բավական մեծաքանակ բնակչություն և համարվում է երկրի ամենախիտ բնակեցված նահանգներից մեկը:

Չայետք է մոռանալ նաև թալիշական նահանգի աշխարհաքաղաքական կարևորության մասին, քանի որ թալիշական մշակույթի և ազգային գիտակցության պահպանմանը զուգահեռ այն կունենար նաև ազգային անվտանգային կարևորություն: Թալիշները նմանատիպ նահանգի ստեղծումը համարում էին պանթյուրքիստական վտանգից պաշտպանվելու միջոց, քանի որ վերջին տարիներին պանթյուրքիստական անջատողական և ծավալապաշտական քաղաքականությունը մեծ սպառնալիք էր դարձել նրանց համար: Այս նահանգի ստեղծումը կարելի էր համարել «տարածաշրջանայն կառավարում կամ լուծում»՝ այսպես կոչված Ադրբեջանի Հանրապետության ծավալապաշտական նկրտումների համատեքստում: Քանի որ աշխարհագրական առումով թալիշաբնակ տարածքները բաժանված են երկու՝ իրանական և ադրբեջանական կամ հյուսիսային և հարավային Թալիշի, իսկ թալիշներն էլ տարածվում է Փուման քաղաքից մինչև Բաքու քաղաքի հարավային հատվածները, իսկ ԱՀ անկախացումից հետո թալիշաբնակ տարածքներում տարվում է ծրագրավորված հակաթալիշական քաղաքականություն և աշխարհաքաղաքական պայքար՝ թալիշների և թալիշերենի վերացման ուղղությամբ: Ասվածի համատեքստում թալիշական նահանգի ստեղծումը կարող էր պատասխան լինել Ադրբեջանի Հանրապետության կողմից իրականացվող ծրագրված հակաիրանական և պանթյուրքիստական գործողություններին:

Ամփոփելով, փորձենք նշել այն հիմնական գործոնները, որոնց պատճառով այդպես էլ անկատար մնաց թալիշական նահանգի ստեղծման ծրագիրը՝

- նախ, Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման երրորդ տարվանից սկսած սրվեց երկրի սոցիալ-տնտեսական իրադրությունը և առնակատումը Արևմուտքի հետ, ինչի պայմաններում թե՛ երկրի իշխանությունները և թե՛ բնակչությունը առավել մտահոգված էին տնտեսական խնդիրների հաղթահարմամբ և էթնիկ խմբերին առնչվող հարցերը կարծես թե ետին պլան էին մղվել,

<sup>6</sup> Bahāārī F., Āerā mohāāefat? (Բախթարի Ֆ., Ինչու՞ են դեմ), Թալիշ ամսագիր, նույն տեղում էջ 9

• շատ ավելի էին լարվել հարաբերությունները Ատրպատականում և Քրդստանում, ինչի ֆոնին թալիշների բարձրաձայնաձ պահանջները վտանգավոր չէին թվում: Թեպետ ատրպատականցիների և քրդերի էթնիկ խնդիրները առկա էին մինչ Մ. Ահմադինեժադի նախագահության գալը, սակայն, երկրի ներքին ու արտաքին որոշակի բարդ իրադրությունը նպաստեց միջէթնիկ հակամարտությունների սրացմանը,

• 2009թ. նախագահական ընրություններից հետո ծագած բողոքի ակցիաները և իրանական կառավարող Էլիտայում առկա տարաձայնությունները արգելակում էին երկրի ներսում ցանկացած վարչական փոփոխություն, իսկ թալիշական նահանգի ստեղծումը նոր իրողություն կբերեր տարածաշրջան՝ նախադեպ հանդիսանալով ինչպես Իրանի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս էթնիկ խմբերի ակտիվացման համար,

• չպետք է մոռանալ նաև, Իրանում մեծ թիվ կազմող թուրքախոս բնակչության շրջանում պանթուրքիստական գաղափարներով խմբերին, որոնք, անկասկած պատրաստ էր անել հնարավոր և անհնար ամեն ինչ՝ խոչընդոտելու թալիշական նահանգի ստեղծման ծրագրի կյանքի կոչմանը,

• չնայած այս խնդրի վերաբերյալ հոգևոր առաջնորդը հանրային կարծիք չի արտահայտել, սակայն դատելով այն հանգամանքից, որ Թալիշական նահանգ ստեղծելու ծրագիրը այդպես էլ անկատար մնաց, կարելի է ենթադրել, որ հոգևոր առաջնորդը և պատասխանատու կառույցները այդ փուլում Թալիշական նահանգի ստեղծումը համարում էին աննպատակահարմար:

## **ВНУТРИПОЛИТИЧЕСКИЙ ДИСКУРС О СОЗДАНИИ ТАЛЫШСКОЙ ПРОВИНЦИИ В ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКЕ ИРАН В ГОДЫ ПРАВЛЕНИЯ М. АХМАДИНЕЖАДА**

*Лиана Петросян*  
(Резюме)

Победа Махмуда Ахмадинежада на президентских выборах в Иране в 2005 году ознаменовала начало новой эры во внутриполитической жизни Ирана. Появление на президентских выборах относительно молодого и неопытного президента также приветствовалось этническими группами, ожидающими более

позитивных изменений в своей общественно-политической жизни. По мнению многих, у М. Ахмадинежада было бы достаточно возможностей для перемен, поскольку он пользовался поддержкой духовного лидера Али Хаменеи. Именно в этот период талышское население страны приступило к реализации своей давней мечты, то есть созданию талышской провинции. В этой статье мы разберем историческую основу проекта, возможности его реализации, плюсы и минусы реализации плана, а также причины ее срыва.

**THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE  
FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC  
REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M.  
AHMADINEJAD**

*Liana Petrosyan*  
(Summary)

The victory of Mahmoud Ahmadinejad in the presidential elections in Iran in 2005 marked the beginning of a new era in the internal political life of Iran. The appearance in the presidential elections of a relatively young and inexperienced president was also welcomed by ethnic groups expecting more positive changes in their social and political life. According to many, M. Ahmadinejad would have had enough opportunity for change, since he enjoyed the support of the spiritual leader Ali Khamenei. It was during this period that the Talysh population of the country began to realize their old dream, that is, the creation of a Talyshi province. In this article, we will analyze the historical basis of the project, the possibilities of its implementation, the pros and cons of implementing the plan, as well as the reasons for its failure.